ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 483-Ա/2 **«08» ապրիլ 2024 թ.**

ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԿԱՄ ՀՈՒՇԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) արշավախումբ կազմակերպելու, գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու, գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման համար ֆինանսական միջոցներ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու հայտի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի,

3) արշավախումբ կազմակերպելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի,

4) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N 4-ի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ